COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

CCJE(2023)3

Ստրասբուրգ, 2023 թվականի դեկտեմբերի 1

ԵՎՐՈՊԱՅԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

(ԵԴԽԽ)

ԵԴԴԽ-ի թիվ 26 (2023) կարծիք.

Առաջիկա քայլերը.

օժանդակ տեխնոլոգիայի կիրառումը դատական համակարգում

I. Ներածություն

1. Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԴԽ), Նախարարների կոմիտեի կողմից իրեն վերապահված մանդատին համապատասխան, պատրաստել է «Առաջիկա քայլերը. օժանդակ տեխնոլոգիայի կիրառումը դատական համակարգում» վերտառությամբ սույն կարծիքը:

2. Սույն կարծիքը կազմվել է ԵԴԴԽ-ի նախորդ կարծիքների, մասնավորապես՝ ԵԴԽԽ-ի Դատավորների մագնա կարտայի (2010) եւ «Արդարադատության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) մասին» թիվ 14 (2011) կարծիքի հիման վրա: Այն պետք է մեկնաբանվի Թիվ 14 (2011) կարծիքի հետ

միասին՝ հաշվի առնելով, որ վերջինս կազմվել է այն ժամանակ, երբ տեխնոլոգիայի կիրառումն ու բնույթը մշակման վաղ փուլում էին։ Բացի այդ, հաշվի են առնվել Եվրոպայի խորհրդի վերաբերելի փաստաթղթերը, օրինակ՝ Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (ԱԱԵՀ) «Դատական համակարգերում եւ այդ միջավայրում արհեստական բանականության (ԱԲ) կիրառման մասին» էթիկայի եվրոպական խարտիան (2018թ.), ԱԱԵՀ-ի «Դատական փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացման (էլ. ներկայացում) եւ դատարանների թվայնացման մասին» ուղեցույցը (2021թ.), ԱԱԵՀ-ի «Դատական վարույթի ընթացքում տեսակոնֆերանսի իրականացման մասին» ուղեցույցը (2021թ.), Նախարարների կոմիտեի CM/Rec (2020)1 առաջարկությունը «Մարդու իրավունքների վրա ալգորիթմային համակարգերի ազդեցությունների մասին», Նախարարների կոմիտեի R (84) 5 առաջարկությունը «Քաղաքացիական դատավարության սկզբունքների մասին՝ նախատեսված արդարադատության գործունեությունը բարելավելու համար» (9-րդ սկզբունք), Խորհրդարանական վեհաժողովի 2341 (2020) բանաձ եւը «Արհեստական բանականության ժողովրդավարական կառավարման անհրաժեշտության մասին», Խորհրդարանական վեհաժողովի «Արդարադատություն՝ ըստ ալգորիթմի. արհեստական բանականության դերը ոստիկանության ծառայության եւ քրեական արդարադատության համակարգերում» զեկույցը (2020թ.)։

3. Հաշվի են առնվել նա եւ Միջամերիկյան զարգացման բանկի «Թվային տեխնոլոգիաներ՝ առավել լավ արդարադատության համար. Գործողությունների գործիքակազմ» փաստաթուղթը (2020թ.), Եվրոպական միության առաջարկությունը Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի «Արհեստական բանականության վերաբերյալ ներդաշնակեցված կանոններ սահմանող» (Արհեստական բանականության մասին ակտ) եւ Միության որոշ օրենսդրական ակտեր փոփոխող կանոնակարգի վերաբերյալ, եւ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի «Անձնական տվյալների մշակման մասով ֆիզիկական անձանց պաշտպանության եւ այդ տվյալների ազատ տեղաշարժի, ինչպես նա եւ 95/46/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2016 թվականի ապրիլի 27-ի

2016/679 կանոնակարգը (Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգ)։

4. Վերջապես, Կարծիքում հաշվի են առնվել ԵԴԴԽ-ի անդամների պատասխանները ԵԴԴԽ-ի թիվ 26 (2023) կարծիքը կազմելու վերաբերյալ հարցաշարին։ Պատասխաններում արտացոլվում է տեխնոլոգիայի լայնածավալ մշակում եւ կիրառում։ Բոլոր անդամ պետություններն այն որոշ չափով կիրառում են։ Այն տատանվում է վարույթների ձայնագրումից մինչ եւ դատական փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացման համակարգեր, գործերի էլեկտրոնային կառավարում եւ տեսակոնֆերանսի իրականացում, եւ վերջինս կիրառման հարցում հատկապես մեծ առաջխաղացում է ունեցել Քովիդ-19 համավարակի հետ եւանքով։ Բազմաթիվ անդամ պետություններ շարժվում են դեպի էլեկտրոնային գործերի 100% կիրառում։ Վճիռների եւ օրենսդրական ակտերի էլեկտրոնային կամ թվային տարբերակների հասանելիությունը նույնպես տեխնոլոգիայի համընդհանուր օգտագործվող ձ եւ է։ Վարույթների ավտոմատացված ձ եւերը կիրառման դեպքում օգտագործվում են փոքր գումարի պահանջով քաղաքացիական վարույթներում (փոքր արժեքով պահանջներով) եւ վճիռների եւ դատական այլ որոշումների դյուրացման համար, որոնք կայացվում են պարզ ընթացակարգային հարցերով։

5. Արդարադատության իրականացման մեջ արհեստական բանականության (ԱԲ) կիրառումը շարունակում է լինել մշակման սկզբնական փուլում։ Թե եւ այն զգալի թվով անդամ պետություններում չի կիրառվում, այդ հնարավորությունն ակտիվորեն ուսումնասիրվում է որոշների կողմից։ Կիրառվելու դեպքում այդ կիրառումը հակված է կենտրոնանալու վարչական առաջադրանքների վրա, օրինակ՝ «խոսքից տեքստ» (թելադրության) ծրագրերը, լեզուների թարգմանությունը եւ վճիռների եւ որոշումների ավտոմատ անանունացումը։ Պատասխաններում նա եւ շեշտվել է անհրաժեշտություն՝ ապահովելու, որ դատական որոշումների համար վերջնական պատասխանատվությունը շարունակի լինել մարդկանցը. ԱԲ-ն պետք է աջակցի դատավորներին, ոչ թե գերակայի նրանց նկատմամբ։

6. Վերջապես, Կարծիքը հիմնված է Եվրոպայի խորհրդի կողմից նշանակված ԵԴԴԽ փորձագետի՝ դոկտոր Ջոն Սորաբջիի (Դոցենտ, Լոնդոնի համալսարանական քոլեջ) կողմից պատրաստված նախնական նախագծի վրա։

II. Կարծիքի նպատակը եւ շրջանակը

7. Կարծիքի նպատակն է ուսումնասիրել դատական համակարգում օժանդակ տեխնոլոգիայի կիրառման առավելությունները եւ թերությունները։ Դրանով ընդունվում է, որ տեխնոլոգիայի սոցիալական կիրառումը կշարունակի զարգանալ։ Դատարանները եւ դատական համակարգերը պետք է շարժվեն այդ զարգացումներին համընթաց։ Բացի այդ, դրանով շեշտվում է տեխնոլոգիան այնպիսի եղանակներով մշակելու եւ կիրառելու կար եւորությունը, որոնցով պահպանվում եւ հնարավորության դեպքում ամրապնդվում են օրենքի գերակայության հիմնարար սկզբունքները։ Այն կարող է, օրինակ, կիրառվել՝ աջակցելու դատավորների եւ դատական գործընթացների կողմերի աշխատանքներին՝ բարելավելով որոշումների կայացման ճշգրտությունը։ Այն կարող է նա եւ խթանել արդարադատության իրականացման արագությունը եւ արդյունավետությունը։ Այն պետք է մասնավորապես ամրապնդի դատական անկախությունը եւ անաչառությունը, որոնք երկուսն էլ միջազգայնորեն երաշխավորված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (ՄԻԵԿ)[1], ինչպես նա եւ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով[2] եւ եվրոպական եւ միջազգային այլ փաստաթղթերով[3]։

8. Իր նպատակն իրագործելու համար սույն կարծիքի III բաժնում ընդգծվում է տեխնոլոգիայի ընդհանուր կիրառումը, իսկ IV բաժնում պատկերացում է ստացվում դրա հատուկ կիրառման մասին, V բաժինն

---

[1] Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, 6-րդ հոդվածի 1-ին կետ, ԵԴԴԽ-ի թիվ 14 (2011) կարծիք, 32-րդ պարբերություն։

[2] Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 10-րդ հոդված։

[3] ԵՄ-ի հիմնարար իրավունքների խարտիա, 47-րդ հոդված, Մարդու իրավունքների միջամերիկյան կոնվենցիա, 8-րդ հոդված, Սկոպուս լեռան դատական անկախության միջազգային չափանիշներ (2008թ., 2012 թվականի փոփոխությամբ), 1.1 սկզբունք։

անդրադառնում է տեխնոլոգիայի կիրառման հնարավոր օգուտներին, իսկ VI բաժինն անդրադառնում է դրա ներկայացրած՝ դատական անկախության մարտահրավերներին եւ վտանգներին։ Այս կետերի լույսի ներքո VII բաժինը նպատակ ունի ներկայացնելու դատական համակարգում տեխնոլոգիայի հետագա կիրառման սկզբունքների կայուն խումբ։ Կարծիքում օգտագործվող եզրույթները սահմանված են Բառարանում։

9. Սույն կարծիքի շրջանակը սահմանափակվում է ժամանակակից տեխնոլոգիաների կոնկրետ ձ եւերի կիրառմամբ, այդ թվում՝ արհեստական բանականության (ԱԲ) կիրառմամբ՝«մարդկային» այն որոշումների կայացմանն աջակցելու համար, որոնք կիրառվում են կամ կարող են կիրառվել դատական մարմինների կողմից, այդ թվում՝ տվյալների գործիքները, փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացումը եւ ընթացակարգերը, գործերի ընթացքի հետ եւելիության եւ կառավարման համակարգերը եւ ձայնային եւ տեսակոնֆերանսների իրականացումը։ Այն չի ընդգրկում վարույթների առցանց հեռարձակումը, ԱԲ-ի կիրառումը որոշումների կայացման համար՝ որպես մարդկանց կողմից կայացվող որոշումների փոխարինում, կամ տեխնոլոգիայի կիրառումը դատական մարմիններից կամ դատարանների վարչակազմերից բացի ցանկացած այլ անձի կողմից։

III. Տեխնոլոգիայի ընդհանուր կիրառումը

10. Պետություններից պահանջվում է ապահովել արդարադատության արդյունավետ եւ գործնական մատչելիություն4։ Տեխնոլոգիան եղանակ է, որով նրանք կարող են դա անել դեպքերի ինչպես սովորական ընթացքում, այնպես էլ արտասովոր կամ արտակարգ հանգամանքներում։ Դա, այսպիսով, այն միջոցներից մեկն է, որով ժողովրդավարական պետությունը, որը ստանձնել է օրենքի գերակայությունն ապահովելու պարտավորություն, կարող է

[4] Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ), *Էյրին ընդդեմ Իռլանդիայի* [*Airey v. Ireland]* (1979թ.) 2 ՄԻԵԶ 305, *Տոլստոյ-Միլոսլավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Tolstoy-Miloslavksy v. The United Kingdom]* (1995թ.) 20 ՄԻԵԶ 442, պարբերություն [59]։

հնարավորություն տալ, որ պետության դատական իշխանությունն իրականացվի մշտապես[5]։

11. Պետության՝ արդարադատության մատչելիությունն ապահովելու կարողությունը բախվում է բազմաթիվ մարտահրավերների։ Այն բախվում է ռեսուրսների հետ կապված մարտահրավերի։ Բոլոր պետությունները պետք է հավասարակշռեն ռեսուրսները պետական մի շարք ծառայություններում, որոնցից են դատարանները եւ դատական համակարգը։ Այն բախվում է արդարադատության հետ կապված մարտահրավերի։ Արդարադատության իրականացումը պետք է կատարվի արդար եւ ժամանակին, քանի որ դա է միջոցը, որով նյութական իրավունքը գործողության մեջ է դրվում։ Սա վերաբերում է իրավունքի բոլոր ոլորտներին։ Այն կիրառվում է միասնական հայցերի նկատմամբ, սակայն նա եւ այն դեպքերում, երբ առկա է զանգվածային հայցերի աճող թիվ՝ անկախ նրանից, թե դրանք հարուցվում են որպես միասնական հայցեր, թե դասային կամ կոլեկտիվ վարույթներ։ Այն կիրառվում է նա եւ վեճերի ավանդական ձ եւերի, ինչպես նա եւ վեճի ավելի ու ավելի աճող ձեւերի նկատմամբ, որոնք առաջանում են թվային շուկաների, էլեկտրոնային առեւտրի զարգացումից, եւ կիբեռհանցագործությունների նկատմամբ։

12. Պետությունները նա եւ բախվում են արդարադատության իրականացման եւ այդպիսով՝ օրենքի գերակայության պահպանման մասով նոր առաջացող մարտահրավերների։ Հանրային եւ ազգային արտակարգ իրավիճակները, լինեն դրանք առողջապահության հետ կապված, ինչպես օրինակ՝ Քովիդ-19 համավարակը, թե արտակարգ այլ իրավիճակներ, զգալի մարտահրավերներ են առաջացնում արդարադատության պատշաճ իրականացման համար։ Տեխնոլոգիան եւ հատկապես տվյալների գործիքները, լինեն դրանք փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացում եւ ընթացակարգեր, գործերի ընթացքի հետ եւելիության եւ կառավարման համակարգեր, թե տեսակոնֆերանսի կամ այլ միջոցների կիրառում, ապահովում են այն միջոցը, որով պետությունները կարող են արդարադատություն իրականացնել դեպքերի

[5] ԵԴԴԽ-ի թիվ 14 (2011) կարծիք, 5-րդ, 15-րդ, 19-րդ, 25-րդ և 27-րդ պարբերություններ։

բնականոն ընթացքում, այսինքն՝ արդարադատության իրականացում օրենքին համապատասխան։ Այն նա եւ միջոց է, որով այն կարող է հաղթահարել այս բազմաթիվ մարտահրավերները։

13. Ավելի լայն առումով տեխնոլոգիան նա եւ ապահովում է հենք, որի հիման վրա դատական մարմինները սկզբունքորեն կարող են ձեռք բերել ավելի լայն դեր, քան արդարադատության ապահովումը՝ օրենքին համապատասխան։ Այն կարող է դատական մարմիններին օգնել նպաստել կանխարգելիչ արդարադատությանը, այսինքն՝ վեճերի կանխարգելմանը դրանց պատճառների վերհանման եւ այն հեռանկարը նվազեցնելուն ուղղված քայլերի ձեռնարկման միջոցով, որ այդ պատճառները հետագայում կառաջանան6։ Որպես օրինակ, դա կարող է իրագործվել հանրամատչելի վճիռներից գործերի տվյալները կամ վեճերի կարգավորումների անանուն տվյալներն արտածելով՝ վեճերի ընդհանուր պատճառները վերհանելու համար։ Այդ տվյալները կարող են այնուհետ եւ վերլուծվել եւ կազմել օրենքի բարեփոխման հիմք, որը կարող է օգնել նվազեցնել այն հեռանկարը, որ հետագայում կարող են առաջանալ այդպիսի վեճեր։ Այն կարող է նա եւ նրանց օգնել խթանել փոխադարձ համաձայնությամբ կարգավորումը վեճերի այլընտրանքային եւ (կամ) առցանց լուծման միջոցով[7]։ Այդ երկու մեխանիզմներն էլ կարող են դյուրացվել դատական մարմինների կողմից տվյալների գործիքների, ինչպես օրինակ՝ գործերի կառավարման համակարգերի կիրառման միջոցով։ Դրանցից մեկի կամ երկուսի խթանումը կարող է մասնավորապես կար եւոր դեր ունենալ դատարանների եւ դատական մարմինների վրա ռեսուրսների մասով ճնշումը նվազեցնելու հարցում՝ պակասեցնելով գործերի կառավարում կամ որոշումների կայացում պահանջող վեճերի թիվը[8]։

---

[6] Ռ. Սուսկինդ, *Առցանց դատարանները և արդարադատության ապագան* , (ՕՀՀ, 2019թ.) 113-115-րդ պարբերություններ, որտեղ դրան առցանց դատարանների զարգացման համատեքստում հղում է արվում որպես «իրավական առողջության խթանման»։

[7] Դա ներառում է կարգավորումը կատարողական վարույթների ընթացքում. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված «Կատարման մասին» Rec(2003)17 առաջարկություն։

[8] *Ալասինիի [Alassini]* գործը *(Շրջակա միջավայրը և սպառողները)* [2010թ.] 3 CMLR 17 [64]-[65]-րդ

IV. Տեխնոլոգիայի հատուկ կիրառումը

14. Այս բաժնում ընդգծված են տեխնոլոգիայի բազմաթիվ հատուկ կիրառումներ՝ տվյալների գործիքներ, փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացում եւ վարույթներ, գործերի ընթացքի հետ եւելիության եւ գործերի կառավարման համակարգեր, հեռավար եւ հիբրիդային լսումներ։

Ա) Տվյալների գործիքներ

15. Առկա է դատական համակարգերի կողմից կիրառվող՝ տվյալների գործիքների լայն շրջանակ։

i) Վարչարարություն եւ գործերի կառավարում

16. Բազային մակարդակում տվյալների գործիքները ներառում են լեզուների կամ փաստաթղթերի թարգմանության, ձայնային թելադրության եւ սղագրության ծառայությունները, դատական ծանուցումների, վճիռների եւ որոշումների թվային ձայնագրությունը։ Դրանք կարող են նա եւ դյուրացնել փաստաթղթերի (այդ թվում՝ գործերի հակիրճ նկարագրությունների) պատրաստումը, ապացույցների գնահատումը, վերջինն օրինակ՝ փաստաթղթերի էլեկտրոնային բացահայտման տեխնոլոգիայի միջոցով։ Դրանք կարող են բարձրացնել գործերի վարչարարության արդյունավետությունը։

17. Ավելի լայն առումով, տվյալների արտածումը գործերի փաստաթղթերից կարող է վերլուծվել տվյալների գործիքների միջոցով՝ օգնելու խթանել արդարադատության մատչելիությունը՝ հանրությանը տրամադրելով առավել մատչելի տեղեկություններ[9]։ Դա կարող է օգնել իրավական համակարգը դարձնել առավել արդյունավետ եւ մատչելի, մասնավորապես՝ այն անձանց համար, որոնք

պարբերություններ, *Մենինիի և Ռամպանելիի* [*Menini and Rampanelli*] գործը *(Օրենքների մոտարկում. Սպառողների պաշտպանություն. Վճիռ)* [2017թ.] ԵՄԱԵԴ C-75/16 (2017 թվականի հունիսի 14) [61]-րդ պարբերություն։

[9] Դրան կարելի է նպաստել, օրինակ, բնական լեզվի մշակման (ԲԼՄ) միջոցով։

կարող են լայնածավալ իրավաբանական գիտելիքներ կամ ռեսուրսներ չունենալ։ Դատական մարմինները կարող են այդ տվյալներն օգտագործել՝ արդարադատության խորհրդին եւ դատարանների կառավարիչներին օգնելու վերհանել եւ վերլուծել դատավարության կողմերի առանձնահատկությունները։ Վերլուծության այդ տեսակը կարող է օգնել վերհանել այն կողմերի համար մատչելիության խոչընդոտները, որոնք կոնկրետ առանձնահատկություններ10 կամ խոցելիություններ ունեն։ Այն կարող է այնուհետ եւ դատական մարմինների կողմից օգտագործվել որպես դատավարական գործընթացների վերանախագծման եւ բարեփոխման ամուր ապացուցողական հիմք՝ խտրականության բացառման սկզբունքին եւ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 6-րդ հոդվածին համապատասխան։

18. Տվյալների գործիքները կարող են արտածել եւ հիմք ապահովել գործերի վերաբերյալ տեղեկությունների վերլուծության համար՝ խթանելու գործերի արդյունավետ տեսակավորումը։ Դրանք կարող են դատավորներին եւ դատարանների կառավարիչներին օգնել վերհանել այն վարույթները, որոնք հնարավոր է, որ համապատասխան են ամփոփման կամ պարզեցված վարույթների համար, նրանց հնարավորություն տալով ընթացք տալ ավտոմատ եղանակով եւ (կամ) լուծվել դատական որոշումների կայացման պարզեցված մեխանիզմների միջոցով։

ii) Կարգավորման խթանում

19. Տվյալների գործիքները կարող են նա եւ դատական մարմիններին օգնել նպաստելու կարգավորմանը։ Գործերի առանձնահատկությունների վերլուծությունը կարող է դատական մարմիններին օգնել կողմերին ուղղորդում տրամադրել կարգավորման գործընթացի հնարավոր համապատասխան ձ եւերի վերաբերյալ։

20. Դրանք կարող են օգտագործվել նա եւ էլեկտրոնային

[10] Ինչպիսիք են ՄԻԵԿ-ի 14-րդ հոդվածում ներկայացվածները։

բանակցությունների կամ էլեկտրոնային հաշտարարության գործիքների միջոցով կարգավորմանը նպաստելու համար։ Այդպիսի գործընթացները կարող են ինկորպորացվել դատական գործընթացներում կամ հասանելի դարձվել դատարանների կայքերի միջոցով[11]։ Կարգավորմանը, հատկապես բանակցությունների միջոցով, կարել է նպաստել նա եւ ԱԲ-ի կիրառման միջոցով՝ վարույթի հնարավոր ելքը կանխատեսելու համար։ Դա կարող է ունենալ գործերի կառավարման համակարգերում ինկորպորացվելու հնարավորություն։

iii) Որոշումների կայացում

21. Տվյալների գործիքներն ունեն դատական համակարգում որոշումների կայացմանն օժանդակելու հարցում լայնածավալ դեր խաղալու ներուժ։

22. Ամենաբազային մակարդակում տվյալների գործիքներն օգնում են նպաստել դատական մարմինների կողմից ավելի արագ եւ ավելի ծախսարդյունավետ իրավական հետազոտության իրականացմանը եւ վճռի եւ որոշման պատրաստմանը։ Դրանք կարող են նա եւ օգնել վերհանել համապատասխան ապացույցները, ինչպես նա եւ ապահովել դատական փաստաթղթերի նմուշներ գործերից տեղեկությունների արտածման միջոցով։

23. Փորձագիտական համակարգերի կամ մեքնայական ուսուցման համակարգերի (աջակցող ԱԲ) կիրառումը նույնպես կարող է օժանդակել դատական որոշումների կայացմանը։ Դրանք կարող են ունենալ դատավորներին վարույթների ըստ էության գնահատումներ եւ (կամ) կանխատեսվող ելքեր տրամադրելու հնարավորություն։ Կարողանալով դատավորներին ըստ էության գնահատումներ տրամադրել՝ դրանք կարող են լինել դատավորներին իրենց եզրակացությունները գնահատելու հարցում օգնելու միջոց։

24. Դրանք կարող են ունենալ դատական որոշումների կայացմանն այլ եղանակներով աջակցելու համար կիրառվելու հնարավորություն։ Դատական որոշումների եւ օրենսդրության առկայությունը տվյալների գործիքի հիմնական ձեւն է։ Դրանք կիրառմամբ տարբերվում են ընդհանուր կայքերից, որոնք

[11] Քաղաքացիական գործերի կարգավորման տրիբունալ (Բրիտանական Կոլումբիա, Կանադա)։

պարզապես պարունակում են նախադեպային իրավունք եւ օրենսդրություն՝ հիմնական առանցքային բառով եւ տեքստից խոսք հնարավորություններով, մինչեւ ավելի բարդ տվյալների շտեմարանները, որոնք ապահովում են գործող հիպերտեքստային հղումներ այլ նախադեպային իրավունքի եւ օրենսդրության։ Դրանք սովորաբար հասանելի են դարձվում անդամ պետությունների կամ մասնավոր ձեռնարկությունների կողմից, եւ վերջիններս կարծես առավել բարդ գործիքներ են տրամադրում։ Դատական մարմինների կողմից դրանք հասանելի դարձվելու դեպքում դրանք երկուսն էլ խթանում են արդյունավետ դատական որոշումների կայացումը, ինչպես նա եւ օգնում են ապահովել դատական իշխանության ժողովրդավարական հաշվետվողականությունը։ Դրանք վերջինն ապահովում են, եթե վճիռները հանրությանը հասանելի են դարձնում[12]։

25. Եթե այդ փաստաթղթերը մեքենաընթեռնելի են, ապա կարելի է հիմնվել հիմնական առանցքային բառերի հնարավորության վրա։ Մեքենայական ուսուցման վրա հիմնված համակարգերը կարող են ունենալ վճիռների շարքում եւ դրանց միջ եւ որոնումներ ապահովելու հնարավորություն։ Դա կարող է դատական մարմիններին մատչելիություն տրամադրել իրավական հետազոտության խելացի ձ եւերին՝ ընդլայնելով նրանց՝ բարդ իրավական շրջանակը, այդ թվում՝ նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նա եւ եվրոպական, ազգային եւ համեմատական իրավաբանությունը եւ փափուկ իրավունքը վերլուծելու իրենց հնարավորությունը։ Դա կարող է օգնել դատական որոշումների կայացման հարցում զարգացմանը։

26. Խելացի հետազոտությունը կարող է մատչելիություն ապահովել փաստարկման նոր կամ նախկինում չվերհանված ուղղությունների։ Այդ փաստերի վերաբերյալ կողմերի գիտելիքները կարող են նրանց օգնել բարելավել իրենց ներկայացրած փաստարկների որակը եւ ստեղծագործականությունը՝ այդպիսով նպաստելով դատական որոշումների կայացման որակին։

27. Եվ հակառակը, այդպիսի վերլուծությունը կարող է դատավորներին օգնել վերհանել այն փաստարկները, որոնք սովորաբար կիրառվում են կողմերի

[12] ԵԴԴԽ-ի թիվ 18 կարծիք (2015), 27-28-րդ և 32-րդ պարբերություններ։ Մասնավոր ձեռնարկությունը նաև կարող է և մատչելիություն է տրամադրում այդպիսի տեղեկություններին։

կողմից կոնկրետ հարցերի մասով, եւ դրանց առնչվող վճիռները։ Այդ օժանդակությունը կարող է այնուհետ եւ որոշումների կայացման հարցում հետ եւողականության խթանման միջոցով մեծացնել դատական իշխանության նկատմամբ վստահությունը եւ դրա լեգիտիմությունը։

Բ) Էլեկտրոնային փաստաթղթերի ներկայացումը եւ վարույթները

28. Էլեկտրոնային փաստաթղթերի ներկայացումը եւ վարույթները դատական մարմիններում տեխնոլոգիայի արդյունավետ կիրառման հիմնական նախապայմանն են։ Դրանք ընկած են դատական աջակցության համակարգերի հիմքում։ Այդ գործընթացները լայնորեն են կիրառվում՝ անկախ նրանից, թե որպես խառը համակարգերի (ֆիզիկական եւ էլեկտրոնային փաստաթղթեր եւ ընթացակարգեր) մաս, թե միայն էլեկտրոնային համակարգերի մաս։ Դրանք նա եւ ներառում են էլեկտրոնային եղանակով իրականացվող՝ փաստաթղթերի եւ գործընթացների վրա թվային, էլեկտրոնային ստորագրությունների կամ էլեկտրոնային ժամադրոշմների կիրառումը։

29. Այս տեխնոլոգիան կարող է կիրառվել վարույթի բոլոր փուլերում։ Վարույթները կարող են հարուցվել առցանց՝ էլեկտրոնային փաստաթղթերի ներկայացման միջոցով։ Ծառայությունը կարող է իրականացվել էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային փոստի, համացանցի վրա հիմնված հավելվածի (հավելված) կամ տեխնոլոգիայի այլ ձ եւերի միջոցով։ Գործերի ընթացքի հետ եւելիության եւ կառավարման համակարգերը դյուրացվում են էլեկտրոնային ընթացակարգերի եւ գործերի կառավարման թվային ֆայլերի միջոցով։ Կատարումը կարող է իրականացվել նա եւ էլեկտրոնային ընթացակարգերի միջոցով՝ անկախ նրանից, թե իրականացվում է դատարանի կողմից կամ անունից, թե երրորդ կողմի, ինչպես օրինակ՝ հարկադիր կատարողի կողմից[13]։ Այս տեխնոլոգիայի կիրառումն ունի բազմաթիվ օգուտներ։

30. Դրանց կիրառումը կարող է նա եւ խթանել վարչական եւ ընթացակարգային ստանդարտացումն առաջին ատյանի եւ վերաքննիչ

[13] Հարկադիր կատարողները ներառում են, օրինակ, դատական կատարածուներին և «huissiers de justice»-ին։

դատարանների եւ տրիբունալների շրջանում։ Ստանդարտացումը կարող է հանգեցնել դատական մարմիններին օժանդակող վարչական անձնակազմի առավել ծախսարդյունավետ եւ արդյունավետ կիրառման։

31. Դրանց կիրառումը կարող է նա եւ հանգեցնել գործընթացների վերագնահատման։ Անհարկի եւ ոչ արդյունավետները կարող են դուրս մղվել՝ կրկին նվազեցնելով վարչական ծախսերը եւ ժամանակը։ Օրինակ՝ այլ եւս անհրաժեշտ չէ ներկայացնել, առբերել կամ տեղափոխել թղթային փաստաթղթեր։ Էլեկտրոնային ֆայլերը հասանելի են ցանկացած պահի կամ վայրում։ Դա կարող է նպաստել դատական գործերի առավել արդյունավետ կառավարմանը։ Հնարավոր է, որ այն կարող է նա եւ նպաստել դատական մարմիններում առավել ճկուն աշխատանքային մոդելներին։

32. Այդպիսի տեխնոլոգիայի կիրառումը կարող է նա եւ հանգեցնել կողմերի եւ նրանց փաստաբանների համար գործերի վերաբերյալ փաստաթղթերին առավել ծախսարդյունավետ եւ արդյունավետ մատչելիության։ Այն կարող է այդպիսով դատական մարմիններին օգնել խթանել արդարադատության առավել մեծ մատչելիություն։ Գրասենյակից, տանից կամ այլ վայրից գործընթացներին մատչելու միջոց ապահովելով՝ կարող է ապահովվել մասնավորապես ավելի մեծ դատավարական հավասարություն։

Գ) Գործերի ընթացքի հետ եւելիության եւ գործերի կառավարման համակարգերը

33. Գործերի ընթացքի հետ եւելիության եւ գործերի կառավարման համակարգերի կիրառումը որպես դատական աջակցության համակարգերի մաս ծառայում է մի շարք գործառույթների։

i) Վարչարարություն

34. Այդ համակարգերից կարող են արտածվել վարչական եւ դատական կառավարման վերաբերյալ տեղեկություններ։ Դա կարող է օգնել դյուրացնելու դատարանի եւ դատական ռեսուրսների կիրառման գնահատումը դատական

մարմինների կողմից։ Այն կարող է արդյունավետ տվյալներ ապահովել արդարադատության համակարգերի համար կատարողականի առանցքային ցուցանիշների ստեղծման եւ կիրառման համար, օրինակ՝ արդյունավետության, ծախսարդյունավետության եւ մատչելիության մասով[14]։

35. Այդ միջոցները կարող են խթանել ռեսուրսների, բյուջեի առավել տեղեկացված բաշխումը եւ աշխատանքային հոսքի պլանավորումը (այդ թվում՝ աշխատանքի արդյունավետ բաշխումը դատավորներին եւ դատարանի կառավարիչներին) եւ ռեսուրսների հետագա պլանավորումը[15]։ Դա կարող է հատկապես օգտակար լինել, եթե այդ համակարգերը փոխգործակցելի են արդարադատության ամբողջ համակարգում։ Այն կարող է նա եւ դյուրացնել դատական համակարգի բոլոր հայեցակետերում ռեսուրսների կառավարման նկատմամբ համալիր մոտեցումը եւ գնահատումը։

36. Եթե գործերի ընթացքի հետ եւելիության եւ կառավարման համակարգի տեղեկությունները հասանելի են դարձվել հանրությանը, օրինակ՝ առցանց հրապարակային ռեգիստրների, գործերի դատական քննության օրերի նշանակման եւ լսումների վերաբերյալ տեղեկությունները, ապա դատական մարմինները կարող են նա եւ ընդլայնել իրենց հանրային հաշվետվողականությունը։

ii) Ժամանակացույցի արդյունավետ կազմում եւ լսումների արդյունավետ նշանակում

37. Բազային մակարդակում այս համակարգերը կարող են առավել հեշտությամբ դյուրացնել դատական մարմինների կողմից դատավարության

[14] Կատարողականի առանցքային ցուցանիշները (ԿԱՑ) միջոց են, որով կարող է գնահատվել կատարողականը։ Դրանք հիմնված են քանակապես չափելի տվյալների վրա։ Եթե խոսքը վերաբերում է դատական իշխանությանը, ԿԱՑ-երը կարող են, օրինակ, վերաբերել վարույթի ավարտից հետո վճռի կայացման համար պահանջված ժամանակի տևողությանը։ Տե՛ս նաև Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (ԱԱԵՀ) «Արդարադատության որակի գնահատման վերաբերյալ ուղեցույցը» (2016թ.)։

[15] Միջամերիկյան զարգացման բանկի «Թվային տեխնոլոգիաներ՝ առավել լավ արդարադատության համար. Գործողությունների գործիքակազմ» փաստաթուղթը (2020թ.), էջ 22-23։

ժամանակացույցի կազմմանը։ Պարզ ասած, դա կարող է իրագործվել անհատական վարույթների կարգավիճակի եւ ընթացքի վերաբերյալ տեղեկություններին առավել պատրաստ մատչելիություն ապահովելու միջոցով։

38. Ավելի բարձր մակարդակում այդ համակարգերը կարող է օպտիմալացնել ժամանակացույցի կազմումը եւ լսումների օրերի նշանակումը։ Աջակցող ԱԲ-ն կարող է օգտագործվել այն յուրաքանչյուր վարույթի քննության համար դատարանների եւ դատական ժամանակի օպտիմալ օգտագործումը որոշելու համար, որոնց համար դրանք պատասխանատվություն են կրում։ Դա կարող է ներառել ընթացակարգային ժամանակացույցի օրինակելի ձ եւերի կամ ուղղությունների տրամադրումը յուրաքանչյուր գործի համար։

iii) Գործերի բաշխում

39. Օրերի նշանակման համակարգերը կարող են նա եւ ապահովել դատավորներին գործերի ավտոմատացված բաշխման հնարավորություն՝ դատական մարմինների կողմից համաձայնեցված չափանիշների կիրառման միջոցով, եւ դրանք ենթակա են դատական վերահսկողության եւ որոշումների կայացման։ Դա կարող է օգնել դյուրացնելու դատարանների շենքերի եւ նիստերի դահլիճների օպտիմալ օգտագործումը։

iv) Համապատասխանության մշտադիտարկում

40. Օպտիմալ ընթացակարգային ժամանակացույց սահմանվելուց անմիջապես հետո գործերի կառավարման համակարգերը կարող են նպաստել համապատասխանության արդյունավետ եւ ծախսարդյունավետ մշտադիտարկմանը[16]։ Դրանք կարող են դատավորներին եւ կողմերին ավտոմատացված հիշեցումներ ուղարկել գալիք դատավարական վերջնաժամկետների վերաբերյալ։ Այդ հիշեցումները կարող են դյուրարցնել արդյունավետ կառավարումը։ Դրանք նա եւ կարող են արագացնել պահանջներին համապատասխանությունը։ Դրանք նա եւ կարող են դատավորներին զգուշացնել

[16] Հարկ է նկատել, որ արդյունավետությունը և տնտեսումն ինքնանպատակ չեն։ Դրանք արդարադատության մատչելիության խթանման միջոցներ են։

ներկայացվող փաստաթղթերի մասին։ Բացի տնտեսումն ու արդյունավետությունը խթանելուց, այդ միջոցները կարող են խթանել դատական մարմինների կողմից արդարադատության ժամանակին իրականացումը, ինչն ինքնին կարող է խթանել ինչպես որոշումների արդյունավետ կայացումը, այնպես էլ կատարումը։

41. Ավտոմատացումը, հատկապես, երբ խոսքը համապատասխանության մասին հիշեցումների մասին է, եւ ստանդարտացված տեղեկությունների տրամադրումը դատավորներին կարող են խթանել գործերի կառավարման հարցում առավել բարձր հետ եւողականությունը։ Հետ եւաբար դա կարող է խթանել դատական իշխանության լեգիտիմությունը եւ դրա նկատմամբ հանրային վստահությունը։

v) Զանգվածային հայցերի կառավարում

42. Գործերի կառավարման համակարգերը նա եւ կարող են խթանել նախադեպերի եւ (կամ) զանգվածային հայցերի նույնականացումը, խմբավորումը եւ կառավարումը։

43. Մեծ թվով անհատական հայցերի դեպքում, որոնք բարձրացնում են նույն կամ համանման իրավական կամ փաստական հարցեր, գործերի կառավարման համակարգերը կարող են օգնել նվազեցնելու դատարանների եւ դատավորների վրա ռեսուրսների մասով ճնշումը՝ նույնականացնելով եւ խմբավորելով դրանք որպես զանգվածային հայց, ինչն այնուհետ եւ կարող է փոխանցվել մեկ կառավարող դատարանի եւ կառավարվել որպես դասային, խմբային կամ ներկայացուցչական հայց։

44. Այդ հայցերով գործերի ավտոմատացված կառավարումը հետ եւաբար կարող է խթանել դրանց արդյունավետ, ծախսարդյունավետ եւ համաչափ կառավարումը եւ որոշման կայացումը։ Այն նա եւ կարող է խթանել զանգվածային կարգավորման արդյունավետ մեխանիզմները։ Այդպիսի գործերի պատրաստի նույնականացումը եւ խմբավորումը խթանում է նախադեպային իրավունքի հետ եւողականությունը, քանի որ այն նվազեցնում է այն վտանգը, որ նույն կամ համանման փաստական կամ իրավական հարցերի վերաբերյալ տարբեր

դատավորների կողմից տարբեր որոշումներ կկայացվեն։

45. Արդյունավետ կառավարումը նա եւ կարող է խթանվել մեծ թվով համանման հայցերի շարքից մեկ հայցի որոշման միջոցով, որն այնուհետ եւ կարող է անցնել վճռի կայացման փուլ՝ որպես նախադեպ կամ գլխավոր գործ։ Դա կարող է դյուրացվել տվյալների գործիքներով ներկայացված գործերից տեղեկությունների արտածման միջոցով՝ դատաքննության եւ այդ հիմքով վճռի կայացման փուլերին անցնելու համար ամենահամապատասխան գործերը որոշելու համար։

vi) Խնդիրների եւ ապացույցների վերհանում եւ գնահատում

46. Դատական աջակցության համակարգում կիրառվող տվյալների գործիքները, ինչպիսիք են կանխատեսող տեխնոլոգիաները17 (էլեկտրոնային բացահայտման կամ էլեկտրոնային հայտնաբերման), կարող են օգտագործվել այն առանցքային ապացույցները սահմանելու համար, որոնք կողմերը վերբերնել են գործերի կառավարման համակարգ։ Դա կարող է դատավորներին ավելի լավ հնարավորություն տալ առավել արդյունավետորեն սահմանելու եւ քննարկելու փաստական հարցերը։

47. Այդ տեխնոլոգիան մասնավորապես կար եւոր է, եթե խոսքը վերաբերում է էլեկտրոնային ապացույցներին։ Դա հատկապես այդպես է քրեական վարույթների դեպքում, ինչպիսիք են պաշտոնական հանցագործությունները, եւ եթե բջջային հեռախոսային տվյալների վերլուծությունը վերաբերում է անձի դեմ կատարվող հանցագործությանը։ Առանց այդպիսի տեխնոլոգիայի կիրառման՝ այդպիսի ապացույցների ուսումնասիրությունը եւ գնահատումը դառնում են մեծապես ռեսուրսատար եւ ժամանակատար։ Գործերի ավտոմատացված կառավարումը կարող է այդպիսով օժանդակել այդպիսի գործերով դատարանի կողմից փաստերի պարզմանը։ Այդպիսով, այն կարող է բարելավել դատական որոշումների ճշգրտությունը, ինչպես նա եւ նվազեցնել վճիռը կայացնելու համար պահանջվող ծախսերը եւ ժամանակը։

[17] Ինչպես օրինակ՝ կանխատեսող ծածկագրումը, որը կողմերի կողմից կիրառվում է որոշ անդամ պետություններում՝ էլեկտրոնային բացահայտում կատարելու համար։

vii) Բաց արդարադատություն եւ հաշվետվողականություն

48. Գործերի ընթացքի հետ եւելիության վերաբերյալ տեղեկությունները հանրությանը եւ լրատվության միջոցներին հասանելի դարձնելը հնարավորություն է տալիս մանրամասն ուսումնասիրելու դատարաններ ներկայացված վեճերի, ինչպես նա եւ վճիռների եւ որոշումների բնույթը եւ տեսակները։ Այն հնարավորություն է տալիս մանրամասն ուսումնասիրելու գործի ընթացքը։ Այդ համակարգերն այդպիսով նույնպես միջոց են, որով դատական մարմինները կարող են խթանել թափանցիկ ընթացակարգային հաշվետվողականությունը[18]։

49. Գործերի ավտոմատացված կառավարման համակարգերը կարող են նա եւ ապահովել, որ բաց արդարադատությունից ցանկացած անհրաժեշտ շեղում կատարվի արդյունավետորեն։ Այդպիսով, դրանք կարող են դատական մարմիններին օգնել ապահովելու ցանկացած պարտավորության կատարում, որն այս առնչությամբ առաջանում է ՄԻԵԿ-ի 6-րդ եւ 8-րդ հոդվածներից։

Դ) Հիբրիդային լսումներ

50. Ձայնային եւ տեսակոնֆերանսների իրականացումը լսումներ անցկացնելու լավ հաստատված միջոց է՝ անկախ առարկայից։ Դրանք հնարավոր են դարձնում հիբրիդային կամ հեռավար լսումների անցկացումը։

51. Քովիդ-19 համավարակը, այնուամենայնիվ, զգալիորեն ընդլայնել է այս տեխնոլոգիայի կիրառումը։ Պետությունները կա՛մ մշակում եւ կիրառում են իրենց սեփական, կա՛մ կիրառում են առ եւտրային հասանելի տեխնոլոգիա՝ այդպիսի լսումներ անցկացնելու համար։ Դրանց կիրառումն ունի բազմաթիվ հնարավոր օգուտներ։

52. Դրանք կարող են նվազեցնել վարույթի քննության համար պահանջվող ծախսը եւ ժամանակը։ Դրանք կարող են նպաստել առավել արդյունավետ լսումների նշանակմանը՝ մի եւնույն ժամանակ վերացնելով ճամփորդության եւ

[18] ԵԴԴԽ-ի թիվ 18 (2015) կարծիք, 27-30-րդ պարբերություններ։

դատարանների շենքերում սպասելու ժամանակը։ Դա կարող է խթանել ընթացակարգային համաչափությունը։ Ֆիզիկական լսումը կարող է առաջացնել անհամաչափ ֆինանսական եւ ժամանակային ծախսեր կարճատ եւ, թղթային, միջանկյալ կամ նախնական դատական նիստերում։ Նույնը կարելի է ասել միայն իրավական փաստարկներ ներառող լսումների վերաբերյալ։ Դրանց կիրառումն այդպիսով խթանում է արդարադատության մատչելիությունը։

53. Հիբրիդային լսումները նույնպես կարող են խթանել ինչպես դատավորների, այնպես էլ կողմերի արդյունավետ մասնակցությունը։ Մասնավորապես, եթե խոսքը վերաբերում է դատավորներին, դրանք կարող են օգնել խթանելու ոչ լրիվ աշխատաժամանակով եւ ճկուն աշխատանքային մոդելները։ Դրանք կարող են այդպիսով բարձրացնել աշխատանքից գոհունակության եւ կարիերայի հնարավորությունների մակարդակը դատական մարմիններում։

54. Եթե խոսքը վերաբերում է դատավորներին եւ կողմերին, ապա դրանք կարող են դյուրացնել մասնակցությունը լսումներին, եթե նրանց անձնական բնութագրերը, առողջական վիճակը եւ այլ հանգամանքներ կարող են հակառակ դեպքում խնդրահարույց դարձնել նրանց մասնակցությունը ֆիզիկական լսմանը։ Խոցելի կողմը մասնավորապես քրեական կամ ընտանեկան գործերով վարույթներում կարող է, օրինակ, փաստացի մասնակցելու հնարավորություն ունենալ իր տանից կամ դատարանի շենքի մեկ այլ հատվածից հեռավար մասնակցելու միջոցով։ Նույնն ավելի լայն իմաստով վերաբերում է հաշմանդամություն ունեցող անձանց։ Հիբրիդային լսումները կարող են այսպիսով խթանել դատավարական հավասարությունը, ինչպես նա եւ ընդհանրապես արդարադատության մատչելիությունը։

V. Տեխնոլոգիայի կիրառումից առաջացող մարտահրավերները

55. ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով, ի թիվս այլնի, նախատեսվում է անկախ

դատարան[19]: Դրանով դատարանից պահանջվում է անկախ լինել գործադիր[20] եւ օրենսդիր իշխանություններից: Այն պետք է անկախ լինի նա եւ դատավարության կողմերից[21]: Դատարանը նա եւ պետք է անաչառ լինի[22]: Երկու դեպքերում էլ դատարանը պետք է լինի ոչ միայն անկախ եւ անաչառ, այլ եւ դիտվի այդպիսին[23]: Դատական անկախությունն իր ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ անհատական հայեցակետերով[24], ինչպես նա եւ անաչառությունը չեն գործում հօգուտ դատական իշխանության:

Ա) Նյութաիրավական մարտահրավերները

i) **Դատական անկախության մարտահրավերը**

56. Տեխնոլոգիական բարեփոխման իրականացումը բազմաթիվ անդամ պետություններում գործադիր իշխանության պատասխանատվությունն է: ԵԴԽԽ ն նախկինում ընդունել է, որ դատական մարմինները պատշաճ կերպով պարտավոր են դերակատարում եւ պատասխանատվություն ունենալ այս մասով՝ դատական անկախությունն ապահովելու համար[25]: Տեխնոլոգիական նախագծի՝ արդարադատության մատչելիությունը գիտակցաբար կամ անգիտակցաբար ձ եւավորելու հնարավորությունը չի կարող թերագնահատվել: Տվյալների գործիքները կարող են կատարողականի առանցքային ցուցանիշների մշակման ընթացքում կիրառվել արդյունավետության վրա հիմնված այնպիսի թիրախների սահմանման միջոցով դատական գործերի կառավարումը վնասելու համար, որոնք

---

[19] ԵԴԽԽ-ի թիվ 3 (2002) կարծիք, 9-րդ պարբերություն, ԵԴԽԽ-ի Դատավորների մագնա կարտա (Հիմնարար սկզբունքներ) (CCJE (2010)3), 2-3-րդ պարբերություններ:

[20] *Սովտրանսավտո հոլդինգն ընդդեմ Ուկրաինայի [Sovtransavto Holding v. Ukraine*] [2002թ.] ՄԻԵԴ 626 [80]-րդ պարբերություն:

[21] *Ռինգայզենն ընդդեմ Ավստրիայի [SRingeisen v. Austria*] [1971թ.] ՄԻԵԴ 2 [95]-րդ պարբերություն:

[22] *Կիպրիանուն ընդդեմ Կիպրոսի [Kyprianou v. Cyprus*] [2005թ.] ՄԻԵԴ 873 [118]-րդ պարբերություն, *Պիեռսակն ընդդեմ Բելգիայի [Piersack v. Belgium]* [1982թ.] ՄԻԵԴ 6 [30]-րդ պարբերություն:

[23] *Շրամեկն ընդդեմ Ավստրիայի [Sramek v. Austria*] [1984թ.] ՄԻԵԴ 12 [42]-րդ պարբերություն, *Կիպրիանուն ընդդեմ Կիպրոսի* [2005թ.] ՄԻԵԴ 873 [121]-րդ պարբերություն: Եվ ԵՄ-ի մասով տե՛ս *«Ասոսիսիակաո Սինդիկալ դուզ ժուիզիշ պորտուգեժիշ» [Associacao Sindical dos Juizes Portugueses] գործը* [2018թ.] ԵՄԱԵԴ C-64/16 [44]-րդ պարբերություն:

[24] Եվրոպայի խորհուրդ, «Դատավորների անկախության, արդյունավետության և պարտականությունների մասին» (2010) 12 առաջարկություն, 2-րդ և 3-րդ գլուխներ, որտեղ այս տարբերություններն անվանվում են համապատասխանաբար արտաքին և ներքին անկախություն

[25] ԵԴԽԽ-ի թիվ 14 (2011) կարծիք, 32-րդ և 36-րդ պարբերություններ:

ոչ բարենպաստ են դատական որոշումների կայացման ինքնավարության համար։ Ավելին, դրանք կարող են կիրառվել դատական իշխանության այն անդամներին ոչ պատշաճ կերպով քննադատելու համար, որոնք չեն ապահովել այդ թիրախները, վնասելով ինչպես անհատական, այնպես էլ ինստիտուցիոնալ դատական անկախությունը։ Ավելին, տեխնոլոգիահեն համակարգի կանխադիրների, հուշումների կամ ԱԲ-ի մշակումը կարող է նվազեցնել դատական ինքնավարությունը որոշումներ կայացնելիս։ Ծայրահեղ դեպքերում դրանք կարող են դա անել այնպիսի եղանակներով, որոնք հակասում են օրենքի գերակայությանը։

57. Տվյալների անվտանգության եւ պաշտպանության արդյունավետ միջոցները պահանջում են դատական իշխանության կողմից կիրառվող տեխնոլոգիայի արդյունավետ, անկախ վերահսկողություն, ինչպես դրանք սովորաբար անում են հասարակության շրջանում26։ Այդ վերահսկողությունը կարող է զգալի վտանգել դատական անկախությանը, եթե այն իրականացվի գործադիր կամ կարգավորող մարմնի կողմից, ինչպես օրինակ՝ տվյալների պաշտպանության վերահսկող մարմնի կողմից, այլ ոչ թե դատական իշխանության մարմնի կողմից։

58. Անդրադառնալով ԱԲ-ին՝ այն բազմաթիվ մարտահրավերներ է առաջադրում դատական անկախությանը։ Ալգորթիմային նախագծումը կարող է վնասել դատական անկախությունը, եթե դատական իշխանությունը դրա նկատմամբ չունի տեղեկացված եւ արդյունավետ մասնակցություն եւ վերահսկողություն։ Դա կարող է մասնավորապես այդպես լինել, եթե նախագծումը եւ ներդրումն անդամ պետությունների կողմից արտապատվիրակվում են մասնավոր ընկերությունների, հատկապես, քանի որ ԱԲ-ի հսկողությունը կարծես թե կենտրոնացած է փոքրաթիվ ընկերությունների ձեռքերում։ Դա նախագծման վտանգի առանձին եւ ցայտուն օրինակ է։ Այն նա եւ կարող է գործերի կառավարման համակարգերի կողմից լսումները նշանակելու համար ԱԲ

[26] «Անձնական տվյալների մշակման մասով ֆիզիկական անձանց պաշտպանության և այդ տվյալների ազատ տեղաշարժի, ինչպես նաև 95/46/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչելու մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2016 թվականի ապրիլի 27-ի 2016/679 կանոնակարգ (ԵՄ) (Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգ)։

կիրառվելու դեպքում դա անել լսումների օրերի նշանակման հարցում կողմնակալություն ներդնող եղանակներով, որոնք վնասում են այդ գործառույթի նկատմամբ դատական հսկողությունը[27]։

59. Գործերի կառավարմանն աջակցելու կամ դատական որոշումների կայացմանն աջակցելու համար ԱԲ-ի կիրառումը կարող է թափանցիկ չլինել այն առումով, թե ինչ տեղեկություններ եւ ինչպես են օգտագործվել այդ տեխնոլոգիայի կողմից։ Թափանցիկության նվազեցված մակարդակը կարող է խաթարել դատական իշխանության բացատրական եւ վերաքննիչ հաշվետվողականությունը[28]։ Դա կարող է կասկածի տակ դնել դատական անկախությունը եւ դատական իշխանության լեգիտիմությունն ինչպես անհատական, այնպես էլ ինստիտուցիոնալ մակարդակով։

60. Դատական որոշումների կայացումը բարձրակարգ հմտություններ ունեցող գործողություն է։ Այն պահանջում է զգալի վերապատրաստում եւ փորձ։ Տվյալների գործիքները որպես դատական իրավական հետազոտության փոխարինում կիրառելը, իսկ աջակցող ԱԲ-ն՝ դատավորներին որոշումներ կայացնելու հարցում օգնելու համար, կարող են վնասել առանձին դատավորի՝ հետազոտություն կատարելու եւ որոշում կայացնելու կարողությունը։ Կանխատեսող ծածկագրման կիրառումը կարող է, օրինակ, վնասել դատավորի կարողությունը՝ որոշելու, թե ինչն է վերաբերելի ապացույց, եւ ինչը՝ ոչ, եւ կարող է բացասաբար ազդել ապացույցների ծանրակշռությունը գնահատելու նրանց կարողության վրա։ Թե եւ այդ գործիքները նախատեսված են դատական որոշումների կայացմանն օժանդակելու համար, դրանք կարող են ժամանակի ընթացքում նվազեցնել դատական հմտությունները եւ փորձը։

61. Դատավորների՝ այլ եւս ապացույցները սահմանելու եւ դրանց ծանրակշռությունը գնահատելու կարողություն չունենալու հնարավոր հետեւանքներից մեկն այն է, որ նրանք կարող են տեխնոլոգիական օժանդակությունից

[27] Կողմնակալությունը կարող է հանգեցնել գործերը ոչ թե պատահականության սկզբունքով, այլ ըստ կողմերի առանձնահատկությունների բաշխելուն։
[28] ԵԴԴԽ-ի թիվ 18 (2015) կարծիք, 27-29-րդ պարբերություններ։

կախվածություն ձեռք բերել։ Ապացույցներն ստանալու եւ սահմանելու հարցում եւ համանման ոլորտներում իրենց հմտություններից եւ փորձից տեխնոլոգիաների, ինչպես օրինակ՝ կանխատեսող ծածկագրման վրա հիմնվելու միջոցով զրկվելը կարող է նվազեցնել անհատական անկախությունը եւ դատական ինքնավարությունը։ Այն, ինչը նախատեսված է օժանդակող լինել, կարող է այդպիսով դառնալ փաստացի որոշում։ Դա կարող է հատկապես խնդրահարույց լինել, եթե այդ օժանդակությունն անհատ դատավորներին ապահովում է նախադեպային նորմերի գնահատմամբ՝ հիմնված դատական իշխանության շրջանում առկա ընդհանուր միտումների վրա. խնդիր, որն այնուհետ եւ ինքնաամրապնդվող կդառնար ավելի ու ավելի մեծ թվով դատավորների կողմից տվյալների գործիքներով սահմանված միտումներին հետ եւելուն զուգընթաց։ Ավելի լայն առումով, դա վտանգ է ներկայացնում ինստիտուցիոնալ անկախությանը, քանի որ այն փաստացի որոշումների կայացման գործընթացը կդներ տվյալների գործիքները նախագծողների ձեռքերում։

ii) **Արդար դատաքննության մարտահրավերը**

62. Տեխնոլոգիան բազմաթիվ մարտահրավերներ է ներկայացնում կողմերի՝ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքն ապահովելու՝ դատական իշխանության կարողության համար։

63. Տվյալների գործիքների կիրառումը, մասնավորապես, երբ դրանք ներառում են աջակցող ԱԲ, կարող է բացասական ազդեցություն ունենալ կողմերի արդար դատաքննության իրավունքն ապահովելու՝ դատական իշխանության կարողության վրա։ Տվյալների գործիքները, ինչպես օրինակ՝ չատբոտերը, կարող են, օրինակ, կեղծ արդյունքներ տալ, օրինակ՝ դրանք կարող են ստեղծել շինծու նախադեպային իրավունք, ինչը կարող է հանգեցնել դատական սխալի։ ԱԲ-ի կիրառումը կարող է նա եւ խաթարել դատական իշխանության վերահսկողությունը գործերի բաշխման նկատմամբ։

64. Այնուամենայնիվ, անհրաժեշտ է զգուշավորություն ցուցաբերել, եթե խոսքը վերաբերում է հիբրիդային լսումներին։ Արդարադատությանը

մատչելիություն ստանալը կարող է հեշտ իրացվելի չլինել, եթե խոսքը վերաբերում է դատաքննություններին կամ վերջնական լսումներին, մասնավորապես, երբ դրանք ներառում են վկայի ցուցմունքներ ստանալը եւ գնահատելը։ Վերջին իրավիճակում, կախված հանգամանքներից, կարող է անհրաժեշտ լինել անցկացնել ֆիզիկական լսում՝ ցուցմունքներ ստանալու եւ գնահատելու եւ արդար դատաքննություն ապահովելու համար, քանի որ դա է այն պատշաճ միջոցը, որով այն կարող է իրականացվել։

65. Հիբրիդային լսումները նույնպես վտանգ են ներկայացնում առ այն, որ կողմերը եւ վկաները կարող են անհատների կողմից հրահանգավորվել առանց տեսախցիկների, ինչը կարող է կոռումպացնել դատաքննության գործընթացը։ Բացի այդ, նրանք նա եւ ներկայացնում են վտանգ, որ լսումները չեն ապահովի կողմերի իրավահավասարություն։ Տարբերակված մասնակցությունը կարող է մասնակիցների մեկ տեսակի համար օգուտ բերել կամ անբարենպաստ լինել մեկ այլ տեսակի համար, մասնավորապես, երբ գնահատվում է վկայի ցուցմունքը, կախված այն բանից, թե արդյոք նրանք ֆիզիկապես ներկա են դատարանում, թե մասնակցում են ձայնային կամ տեսակոնֆերանսի միջոցով։ Քրեական վարույթներով, երբ պաշտպանյալը մասնակցում է տեսակոնֆերանսի միջոցով, եւ նրա փաստաբանն անձամբ ներկա չէ նրա հետ, կարող են հարցեր առաջանալ առ այն, թե արդյոք նա կարող է լսման ընթացքում լիովին գաղտնի հիմունքներով իրավաբանական խորհրդատվություն ստանալ[29]։

66. Ձայնային եւ տեսակոնֆերանսների իրականացումը նա եւ վտանգ է ներկայացնում դատական իշխանության՝ բաց արդարադատություն ապահովելու պարտականությունը կատարելու կարողության վրա։ Տեխնոլոգիան կարող է խաթարել դա, եթե մատչելիությունն արդյունավետորեն ներկառուցված չէ[30]։ Եվ հակառակը, հանրության եւ լրատվության միջոցների չափազանց հեշտ մատչելիությունը տեսակոնֆերանսի միջոցով անցկացվող լսումներին կարող է դատավորների նկատմամբ ճնշում ստեղծել։ Մշտական մանրամասն ստուգման

---

[29] *Սախնովսկին ընդդեմ Ռուսաստանի [Sakhnovskiy v. Russia]* [2010թ.] ՄԻԵԴ 1673, *Սախնովսկին ընդդեմ Ռուսաստանի* ([2018թ.] ՄԻԵԴ 966, *Մարչելո Վիոլան ընդդեմ Իտալիայի [Marcello Viola v. Italy]* (թիվ 45106/04) (2006 թվականի հոկտեմբերի 5) [67]-[77]-րդ պարբերություններ, *Գորբունովն ընդդեմ Ռուսաստանի [Gorbunov v. Russia]* [2016թ.] ՄԻԵԴ 231։

[30] *Միկալեֆն ընդդեմ Մալթայի* [*Micallef v. Malta]* [2009թ.] ՄԻԵԴ 1571։

բնույթը եւ որակը, երբ բոլոր լսումներն առցանց հասանելի են դարձվում, կարող են խաթարել դատական մարմնի որոշումների կայացումը՝ հատկապես խախտելով գաղտնիության կար եւոր գոտին եւ այն նկատառումը, որ դատավորները պետք է իրենց պարտականություններն արդյունավետ կատարեն։

67. Ֆիզիկական լսումներից հիբիրդային կամ հեռավար լսումների զգալի անցումը կարող է խախտել դատական գործընթացի սահմանադրական կարգավիճակը, մասնավորապես՝ դրա խորհրդանշական բնույթը31։ Վարույթին տանից, ավտոմեքենայից կամ հանրային տարածքից մասնակցելը կարող է խաթարել հանրության ընկալումը վարույթի քաղաքացիական կար եւորության վերաբերյալ։ Դատական իշխանության կարգավիճակը եւ լեգիտիմությունն ինստիտուցիոնալ մակարդակում որպես պետության մաս կարող է այդպիսով վնասվել։ Անհատական վարույթների մասով դա կարող է հանգեցնել նրան, որ մասնակիցները վարույթին չմասնակցեն նույնքան լրջորեն, որքանով որ պետք է մասնակցեին։ Դա կարող է բացասական ազդեցություն ունենալ ցուցմունքների, մասնավորապես՝ վկայի երդմամբ ցուցմունքի բնույթի եւ որակի վրա, ինչը նույնպես կարող է խաթարել դատական իշխանության՝ արդար դատաքննություններ ապահովելու կարողությունը։

Բ) Այլ մարտահրավերներ

i) Նախագծման մարտահրավերը

68. Տեխնոլոգիան կարող է դատարաններում եւ դատական մարմիններում ինկորպորացվել մի քանի եղանակով։ Այն կարող է կրկնօրինակել նախաթվային գործընթացները։ Բնորոշ ռիսկն այն է, որ ստատուս քվոյի մասով կողմնակալությունը հետագա համակարգերում կներառի նախագծման ցանկացած թերություն, որն առկա է ներկայիս գործելակերպերում եւ ընթացակարգերում։ Եթե պետք է ընդունվի ավտոմատացում, անհրաժեշտ է զգուշավորություն ցուցաբերել՝ ստուգելու համար, թե արդյոք այն, ինչը ներկայումս իրականացվում է, պետք է պատշաճ կերպով կրկնօրինակվի տեխնոլոգիական առումով։ Բացի այդ,

[31] ԵԴԴԽ-ի թիվ 14 (2011) կարծիք, 6-րդ պարբերություն։

տեխնոլոգիայի որոշ ձ եւեր, մասնավորապես՝ նրանք, որոնք նախատեսված են գործերի ընթացքի հետ եւելիության եւ գործերի կառավարման վերաբերյալ որոշումների կայացման համար, նույնպես կարող են պահանջել դատական մարմինների կողմից տրամադրվող տեղեկություններ՝ պատշաճ նախագծում ապահովելու համար։ Անհրաժեշտ է զգուշավորություն ցուցաբերել՝ ապահովելու համար, որ այդ տեղեկությունները տրամադրվեն։

69. Բացի այդ, տեխնոլոգիայի կիրառումը կարող է ընդլայնել դատական իշխանության դերը։ Դա կարող է արվել դատական համակարգերին հնարավորություն տալով դատական գործընթացներում ինկորպորացնելու կանխարգելիչ եւ փոխադարձ համաձայնությամբ արդարադատություն։ Այստեղ վտանգն այն է, որ դատական իշխանության սահմանադրական դերը կարող է խաթարվել։ Դատական իշխանության սահմանադրական դերը կարող է համադրվել վեճերի լուծման ծառայության, սպառողական ծառայության հետ։

70. Տեխնոլոգիան նա եւ նախագծման առումով չեզոք չէ։ Այն կրում է խտրական նախագծման, ներդրման եւ կիրառման բնորոշ վտանգ։ Նախագծմամբ կարող է կողմերի նկատմամբ ռասայի, էթնիկ ծագման, սեռի կամ գենդերային հիմքով խտրականություն դրս եւորվել։ Այն կարող է նա եւ բացասաբար ազդել, օրինակ, նեյրոբազմազան կամ տեսողության կամ լսողության խանգարումներ ունեցող անձանց վրա։ Դա կարող է առաջանալ խտրական նախագծման կամ դատական աջակցության համակարգերում ինքնին խտրական տվյալների կիրառման միջոցով կամ երկուսի միջոցով։ Այն կարող է նա եւ խոչընդոտել արդարադատության մատչելիությունն այն անձանց համար, որոնք տեխնոլոգիական առումով անապահով են, եթե նրանք չեն կարող տեխնոլոգիան արդյունավետորեն օգտագործել կամ դրան մատչելիություն ունենալ։

71. Այսպիսով, առաջնային մարտահրավերն է ապահովել, որ տեխնոլոգիական նախագծումը համահունչ լինի խտրականության բացառման սկզբունքին եւ ՄԻԵԿ-ի 6-րդ եւ 8-րդ հոդվածներին՝ մի եւնույն ժամանակ պահպանելով դատական իշխանության սահմանադրական կարգավիճակը։

ii) Ներդրման մարտահրավերը

72. Արդյունավետ նախագծումը պետք է փոխլրացվի արդյունավետ ներդրմամբ, ինչը պահանջում է դատավորների ակտիվ ներգրավվածություն, ընդգրկվածություն եւ հետագա վերապատրաստում։

73. Եթե տեխնոլոգիայի կիրառումը պետք է լիովին իրացնի տնտեսական եւ արդյունավետության մասով օգուտները, ապա փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացումը եւ վարույթները, գործերի ընթացքի հետ եւելիության եւ կառավարման համակարգերը պետք է ինկորպորացվեն արդարադատության ամբողջ համակարգում։ Փոխգործակցելիության բացակայությունը կարող է այդ համակարգերում անարդյունավետություն առաջացնել։ Վատագույն դեպքում այն կարող է հանգեցնել ներդրումից հրաժարվելուն։

74. Իրականացումը կարող է տուժել նա եւ թույլատրելի սահմաններից վեր լինելուց։ Տեխնոլոգիական փոփոխությունը չափավոր տեմպով իրականացնել փորձելու փոխարեն կարող են ձեռնարկվել քայլեր՝ ամբողջ ծավալով բարեփոխում իրականացնելու չափից շատ հավակնոտ ժամկետներում։ Որքան մեծ է որ եւէ պահի բարեփոխման աստիճանը եւ բնույթը, այնքան մեծ է վտանգը, որ այն կձախողվի, եւ հետ եւաբար դրանից կհրաժարվեն, կամ լավագույն դեպքում այն մասամբ եւ ենթաօպտիմալ եղանակով կիրականացվի։

iii) Ֆինանսավորման մարտահրավերը

75. ԵԴԽԽ-ն նախկինում ընդգծել է պատշաճ ֆինանսավորման հիմնարար կար եւորությունը՝ դատական իշխանությանը որպես պետության մաս իր գործառույթներն իրականացնելու հնարավորություն տալու համար[32]։ Տեխնոլոգիայի ընդլայնված կիրառումը չպետք է դիտվի որպես դատարանների եւ դատական իշխանության վրա պետության ծախսերը նվազեցնելու միջոց։ Տեխնոլոգիական փոփոխության իրականացումն իր հետ կրում է մի շարք հարակից ծախսեր, որոնք անհրաժեշտ է արդյունավետորեն հաշվի առնել եւ դրանց համար բյուջե նախատեսել։

[32] ԵԴԴԽ-ի թիվ 2 (2001) կարծիք։

76. Շարունակական անվտանգ ֆինանսավորումը նա եւ պահանջվում է, երբ տեխնոլոգիան կայուն վիճակում է։ Տեխնոլոգիան պետք է արդիական լինի։ Դատավորներին եւ կառավարիչներին պարբերական վերապատրաստում է անհրաժեշտ։ Դա շարունակական ծախսեր է ներառում։ Բացի այդ, կառավարիչները եւ ՏՏ մասնագետները, որոնք աշխատում են դատարաններում՝ դատական իշխանությանը տեխնոլոգիան շահագործելու, պահպանելու եւ թարմացնելու հնարավորություն տալու համար, կարող են մասնավորապես պահանջել բարձր աշխատավարձեր՝ հաշվի առնելով իրենց ընդլայնված եւ ՏՏ հմտությունները։ Դրա համար անհրաժեշտ կլինի բյուջե նախատեսել, եւ դրա բացակայությամբ դատական մարմինների համար կարող է անհնար լինել տեխնոլոգիան արդյունավետորեն օգտագործել։

iv) Տվյալների պաշտպանության, անվտանգության եւ մատչելիության մարտահրավերը

77. Տեխնոլոգիայի ընդլայնված կիրառումն առաջացնում է տվյալների լայնածավալ մշակում, ինչը կարող է միջամտել ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքներին, այդ թվում՝ անձնական տվյալների պաշտպանության իրավունքին[33]։ Տեխնոլոգիական նախագծման, ներդրման եւ կիրառման մասով այդ իրավունքները պետք է պաշտպանվեն։ Այդ միջոցները պետք է նա եւ պաշտպանեն անվտանգության հետ կապված վտանգներից։ Դա հատկապես այդպես է, երբ խոսքը վերաբերում է քրեական եւ ընտանեկան գործերով վարույթներով գործի զգայուն տվյալներին։ Պատահական բացահայտումը կամ ոչ վստահելի անձանց չարամիտ արարքները կարող են վտանգել տվյալների անվտանգությունը եւ մասնավորապես արդարադատությանն առնչվող տվյալների գաղտնիությունը։

78. Համակարգի խափանումը եւս մեկ վտանգ է, որն առաջանում է տեխնոլոգիայի լայնածավալ կիրառումից, մասնավորապես՝ փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացման եւ ընթացակարգերի եւ գործերի ընթացքի հետ

[33] Եվրոպայի խորհրդի «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիա։

եւելիության եւ կառավարման համակարգերի կիրառումից։ Համակարգերի խափանումները կարող են գործի տվյալներն անհասանելի դարձնել։ Առանց պատշաճ եւ արդյունավետ տեխնոլոգիական եւ (կամ) թղթային պահուստային համակարգերի՝ առկա է արդարադատության արդյունավետ եւ գործնական մատչելիությանը սպառնացող իրական վտանգ։

v) Բարեկեցության մարտահրավերը

79. Տեխնոլոգիայի ընդլայնված կիրառումը կարող է սպառնալիք ներկայացնել դատավորների եւ դատարանից այլ օգտվողների կարճատ եւ եւ երկարատ եւ առողջությանը եւ բարեկեցությանը։

80. Տեխնոլոգիայի լայնատարած կիրառումը կարող է հանգեցնել, օրինակ, հոգնածության, աչքերի լարվածության, գլխացավերի, հատկապես՝ այնպիսի տեխնոլոգիայի չափազանց մեծ կիրառումից, ինչպիսիք են փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացումը եւ ընթացակարգերը եւ տեսակոնֆերանսները։ Այն կարող է հանգեցնել նա եւ մեծ սթրեսի, լարվածության, ընկճվածության, ուշադրության կենտրոնացման եւ մտավոր աշխատունակության նվազեցման[34]։ Ցանկացած այդպիսի բացասական ազդեցություն կարող է հավասարապես բացասական ազդեցություն ունենալ դատավորի՝ կողմերի համար արդար դատաքննություն ապահովելու կարողության վրա։ Այն կարող է նա եւ բարձրացնել որոշումների կայացման հարցում սխալների թիվը։

VI. Տեխնոլոգիայի կիրառման իրավական եւ էթիկական շրջանակը

81. Դատական անկախությունը եւ անաչառությունն ավելի լավ ապահովելու համար ԵԴԽԽ-ն համարում է, որ անհրաժեշտ է տեխնոլոգիաների մշակման եւ դատական մարմինների կողմից կիրառման հստակ իրավական եւ

[34] ՄԱԿ-ի ԹՀՊԳ, Դատավորների բարեկեցության և դատավորների բարեվարքության միջև կապի ուսումնասիրություն (2022թ.), էջ [12], Է. Բուլոք, Ա. Քոլվին և Մ. Ջեքսոն, *«Զում»-ի հոգնածությունը ՔՈՎԻԴ-19-ի դարաշրջանում,* Գլոբալ համայնքում սոցիալական աշխատանքի ամսագիր, (2022թ.) 7(1), էջ 1-9։

էթիկական շրջանակ։ Այդպիսի շրջանակը դատական իշխանությանը, որպես պետության իշխանության ճյուղերից մեկը, ավելի լավ հնարավորություն կտա ապահովելու իրավունքի գերակայությունը՝ դրա կողմից տեխնոլոգիայի ավելի ու ավելի լայն կիրառմանը եւ դրան հարմարվելուն զուգընթաց[35]։

82. Անդամ պետությունները պետք է մշակեն այնպիսի շրջանակ, որը համապատասխան է ՄԻԵԿ-ի պահանջներին։ Մասնավորապես տեխնոլոգիայի կիրառումը պետք է համապատասխանի դատական անկախությանը եւ անաչառությանը։ Այն պետք է նա եւ համապատասխանի ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով սահմանված՝ արդար դատաքննության իրավունքին, քանի որ վերաբերում է դատական վարույթին։ Այն պետք է նա եւ համապատասխանի ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածով նախատեսված՝ անձնական կյանքը հարգելու եւ տվյալների պաշտպանության իրավունքին[36] եւ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով նախատեսված՝ հանրության, այդ թվում՝ լրատվության միջոցների՝ ազատ արտահայտվելու իրավունքին։ Այն կոնկրետ վտանգով պայմանավորված, որ տեխնոլոգիայի կիրառումը կարող է կողմնակալ կամ կողմնապահ լինել իր կիրառման կամ ազդեցությունների հարցում, տեխնոլոգիան պետք է հատուկ հաշվի առնի այդ իրավունքները խտրականության բացառման սկզբունքին համապատասխան երաշխավորելու անհրաժեշտությունը։

83. ԵԴԽԽ-ն ընդունում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) մշակել է եւ կշարունակի մշակել իր նախադեպային իրավունքը՝ տեխնոլոգիական զարգացումների լույսի ներքո։ Որպես օրինակ, լսումից ֆիզիկապես բացակայելը ժամանակին ընկալվել է որպես ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի խախտում։ Որոշակի պայմաններում եւ տեսակոնֆերանսների արդյունավետ իրականացման տարածքների մշակմանը զուգընթաց՝ այժմ ընդունվում է, որ դատաքննությանն այդպիսի տարածքների միջոցով մասնակցությունը համարժեք է ֆիզիկական ներկայությանը եւ այդպիսով չի հակասում 6-րդ հոդվածին[37]։ Նույն կերպ, տեսակոնֆերանսների իրականացման

---

[35] ԵԴԴԽ-ի թիվ 18 (2015) կարծիք, 20-22-րդ պարբերություններ։

[36] Տե՛ս, օրինակ, *Ավիլկինան ընդդեմ Ռուսաստանի* [*Avilkina v. Russia*] [2013թ.] ՄԻԵԴ 515, [45]-[46]-րդ պարբերություն։

[37] *Մարչելո Վիոլան ընդդեմ Իտալիայի* (թիվ 45106/04) (2006 թվականի հոկտեմբերի 5), [67]-[77]-րդ պարբերություններ։

տարածքները, որոնք ունեն անվտանգ ընդմիջման սենյակներ, կարող են քրեական վարույթներով պաշտպանյալների համար ապահովել մասնավոր կյանքի անձեռնմխելիության եւ գաղտնիության պահանջվող մակարդակ՝ 6-րդ հոդվածին համապատասխան իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար, երբ նախկինում տեխնոլոգիան դա անելու հնարավորություն չէր ունենա[38]:

84. ՄԻԵԿ-ով նախատեսված ընդհանուր շրջանակում եւ հիմնարար իրավունքների ազգային պաշտպանության շրջանակներում դատական մարմինների կողմից տեխնոլոգիայի կիրառումը պետք է հիմնավորվի պատշաճ օրենսդրական հիմքով[39]: Դա մասնավորապես կար եւոր է, երբ տեխնոլոգիան կիրառվում է դատական աջակցության համակարգերում, որոնք օժանդակություն են տրամադրում դատական որոշումների կայացման հարցում: Այն հավասարապես կար եւոր է, երբ խոսքը վերաբերում է անձնական տվյալների պաշտպանությանը:

85. Ապահովելու համար տվյալների արդյունավետ պաշտպանություն եւ անվտանգություն, ինչպես նա եւ կարգավորում՝ առանց դատավորների անկախությունը վտանգելու, անդամ պետությունները պետք է ստեղծեն դատական լիազորությունների շրջանակներում գործելիս դատական իշխանության տվյալների պաշտպանության ազգային վերահսկող մարմիններ, եթե դրանք արդեն իսկ առկա չեն: Այդ մարմինները պետք է ստեղծվեն դատական իշխանության շրջանակներում: Կարող է նախատեսվել նա եւ օրենսդրական դրույթ, որով բաշխվում է պատասխանատվությունը դատական իշխանության կողմից կիրառվող տեխնոլոգիայի եւ տվյալների անվտանգության եւ ամբողջականության համար:

86. Օրենսդրությամբ պետք է նա եւ նախատեսվի դրույթ դատական մարմինների կողմից տեխնոլոգիայի կիրառմանն ավելի ու ավելի մեծացող անցման վերաբերյալ: Դրանով մասնավորապես պետք է նախատեսվի դրույթ

---

[38] *Սախնովսկին ընդդեմ Ռուսաստանի* [2010թ.] ՄԻԵԴ 1673, *Սախնովսկին ընդդեմ Ռուսաստանի* ([2018թ.] ՄԻԵԴ 966, *Գորբունովն ընդդեմ Ռուսաստանի* [2016թ.] ՄԻԵԴ 231:

[39] ԱԱԵՀ-ի «Դատական վարույթներում տեսակոնֆերանսի իրականացման մասին» ուղեցույց (2021թ.), էջ 8:

այլընտրանքային, տեխնոլոգիաների վրա չհիմնված միջոցների պահպանման մասին՝ դատական իշխանությանը եւ դատական վարույթին մատչելիության վերաբերյալ այն անձանց համար, որոնք տեխնոլոգիային արդյունավետորեն մատչելու կամ այն կիրառելու հնարավորություն չունեն։

87. Հատկապես կար եւոր է, որ դրույթ նախատեսվի տեխնոլոգիաների վրա չհիմնված լսումները շարունակելու վերաբերյալ։ Թե եւ ձայանին եւ (կամ) տեսակոնֆերանսի իրականացումը կարող է որոշ լսումների դեպքում պատշաճ լինել, պարտադիր չէ, որ այն պատշաճ լինի երկարատ եւ լսումների կամ այն լսումների դեպքում, որոնք, ի թիվս այլնի, ներառում են վկայի ցուցմունք ստանալը եւ գնահատելը։

88. Ընթացակարգային կանոններով պետք է նախատեսվի դրույթ այն մասին, որ դատական մարմնի աշխատակիցը, որը սովորաբար պետք է լսումների ընթացքում ներկա գտնվի նիստերի դահլիճում/դատարանի շենքում եւ միայն բացառիկ դեպքերում այլ վայրից մասնակցի հեռավար լսումների, կարող է հայեցողություն ցուցաբերել առ այն, որ որոշի, արդյոք լսումները պետք է անցկացվեն տեխնոլոգիայի միջոցով, թե ավանդական եղանակով։ Նրանք պետք է նա եւ դրույթ նախատեսեն այն մասին, թե երբ է անհրաժեշտ, որ վարույթի մասնակիցները, այդ թվում՝ դատական համակարգի անդամները, անձամբ ներկայանան դատարան, երբ լսումներն այլ կերպ իրականացվում են ձայնային կամ տեսատեխնոլոգիայի միջոցով։

89. Ընդհանուր օրենսդրական շրջանակում ընթացակարգային կանոնները պետք է նախատեսեն դրույթ տեխնոլոգիան կոնկրետ նպատակներով կիրառելու մասին դատավորների կողմից կայացվող որոշման վերաբերյալ։ Անդամ պետությունները պետք է դատավարության տարբեր ձ եւերի համար տարբեր կանոններ հասանելի դարձնեն։ Ընթացակարգային կանոններում եւ ընդհանրապես օրենսդրության մեջ նախատեսված՝ կոնկրետ վարույթով տեխնոլոգիայի կիրառման մասով ցանկացած հայեցողություն պետք է

իրականացվի դատական կարգով, ոչ թե վարչական։

VII. Դատական համակարգերում տեխնոլոգիայի վերաբերյալ ընդհանուր սկզբունքները

90. Տեխնոլոգիայի կիրառումը պետք է նախ եւառաջ պահպանի դատական գործընթացի բնույթը։ Նախ, բազմաթիվ դատական որոշումներ հայեցողական որոշումներ են՝ հիմնված առանձին գործի կոնկրետ հանգամանքների վրա։ Երկրորդ, դատավորները կար եւոր դեր են խաղում օրենքի մշակման հարցում։ Նրանք զուտ չեն կիրառում ֆիքսված եւ անփոփոխ կանոնները։ Դատավորները պետք է կարողանան շտկել օրենքը կամ դրան ավելացում կատարել, եթե այն նպատակը չի ապահովում կամ վտանգում է ձախողել օրենքի կիրառումը կոնկրետ դեպքերում։ Տեխնոլոգիան չպետք է մուտք գործի արդարադատության տիրույթ։ Տեխնոլոգիան չպետք է ապախրախուսի կամ խոչընդոտի դատավորների քննադատական մտածելակերպը, քանի որ դա կարող է հանգեցնել իրավական զարգացման ճահճացման եւ իրավական պաշտպանության համակարգի քայքայման։ Հետ եւաբար տեխնոլոգիական գործիքները պետք է պահպանեն դատական որոշումների կայացման գործընթացը եւ դատավորների ինքնավարությունը։

91. ԵԴԽԽ-ն համարում է, որ դատավորներին աջակցելու նպատակով տեխնոլոգիայի հետագա նախագծումը, ներդրումը եւ կիրառումը պետք է առաջնորդվեն հետ եւյալ սկզբունքներով։ Դրանք նախատեսված են համահունչ լինելու «Դատական համակարգերում եւ այդ միջավայրում արհեստական բանականության (ԱԲ) կիրառման մասին» էթիկայի եվրոպական խարտիային (2018թ.) եւ ԱԱԵՀ-ի «Դատական փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացման (էլ. ներկայացում) եւ դատարանների թվայնացման մասին» ուղեցույցին (2021թ.)։

92. ԵԴԽԽ-ն աջակցում է այն տեխնոլոգիայի կիրառումը, որն օժանդակում է դատավորներին։ Դա այդպես է, երբ տեխնոլոգիան լիովին պահպանում է հետ եւյալ սկզբունքները։ Ըստ այդմ, այս սկզբունքների առանցքային նպատակն է ավելի լավ ապահովել արդյունավետ եւ գործնական մատչելիություն արդարադատությանը՝ դատական անկախությանը եւ օրենքի գերակայությանը

համապատասխան։ Դրանք նախատեսված են դատական լեգիտիմությունը եւ դատական իշխանության նկատմամբ վստահությունը պահպանելու եւ ամրապնդելու համար։ Սկզբունքները հետ եւյալն են.

i) **Օրենքի գերակայություն**. տեխնոլոգիան պետք է կիրառվի միայն օրենքի գերակայությանն աջակցելու եւ այն ամրապնդելու համար։ Հետ եւաբար այն պետք է նախագծվի, իրականացվի եւ կիրառվի հստակ, ընդհանուր առմամբ կիրառելի եւ հանրամատչելի իրավական եւ էթիկական շրջանակի սահմաններում եւ հիման վրա, որը համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (ՄԻԵԿ) երաշխավորված հիմնարար իրավունքներին։

ii) **Դատական անկախություն եւ անաչառություն.** տեխնոլոգիան պետք է աջակցի դատական իշխանությանը դրա սահմանադրական դերն արդար եւ արդյունավետ կատարելու հարցում։ Դրա նախագծման եւ շահագործման վրա պետք է տարածվեն այնպիսի երաշխիքներ, այդ թվում՝ օրենսդրություն եւ (կամ) դատարանի կանոններ, որոնք անհրաժեշտ են ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ անհատ դատավորների անկախությունը եւ անաչառությունն իրավական վարույթի բոլոր փուլերում ապահովելու համար։ Այդպիսի երաշխիքները պետք է համապատասխանեցվեն վարույթի կարիքներին՝ անկախ դրանց բնույթից։ Մասնավորապես տեխնոլոգիան չպետք է կիրառվի անհատ դատավորի կողմից կայացվող որոշումները կանխատեսելու համար։

iii) **Դատական ինքնավարություն**. տեխնոլոգիան կարող է կիրառվել միայն դատարաններին եւ դատական իշխանությանը վարույթի պատշաճ կառավարման եւ դրա վերաբերյալ որոշման կայացման հարցում աջակցելու եւ օժանդակելու համար։ Որոշումների կայացումը պետք է բացահայտ եւ ոչ բացահայտ կերպով իրականացվի միայն դատավորների կողմից։ Այն չի կարող պատվիրակվել տեխնոլոգիային կամ իրականացվել դրա կողմից կամ միջոցով։ Տեխնոլոգիայի կիրառումը պետք է պահպանի դատական ինքնավարությունը։

iv) **Դատական վերահսկողություն.** դատական անկախության,

անաչառության եւ ինքնավարության հետ իր համապատասխանությունը պահպանելու համար դատավորները պետք է անկախ նրանից՝ դատական խորհրդի միջոցով, թե այլ կերպ, ներգրավված լինեն տեխնոլոգիայի գնմանը, նախագծմանը եւ հսկողությանը։ Նրանք նա եւ պետք է համաձայնություն տան դրա ներմուծմանը եւ ներդրմանը։ Սա հատկապես կար եւոր է, երբ դատարանի կառավարման պատասխանատվությունն արդարադատության նախարարությունների վրա է կամ դատական իշխանության եւ արդարադատության նախարարության միջ եւ գործընկերության հարց է։ Պետք է նա եւ նախատեսվի դրույթ այն մասին, որ դատավորները տեղեկացվեն տեխնոլոգիական նորարարության մասին՝ դյուրացնելու համար իրենց աղրյունավետ ներգրավվածությունը եւ անհրաժեշտության դեպքում համաձայնությունը նոր եւ առաջացող տեխնոլոգիայի կիրառման հարցում։

v) **եւ որակ.** տեխնոլոգիան պետք է ամրապնդի եւ բարելավի արդարադատության արդյունավետ եւ գործնական մատչելիությունը հասարակության բոլոր անդամների համար։ Այն պետք է խթանի մատչելիությունն ինչպես որոշումների կայացման մասով արդարադատությանը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին համապատասխան, այնպես էլ փոխադարձ համաձայնությամբ կարգավորմանը։ Մատչելիության խթանումը պարտադիր պահանջում է, որ տեխնոլոգիան բարձրորակ լինի։ Եթե տեխնոլոգիայի մատչելիությունն անիրագործելի է, պետք է հասանելի դարձվի պատշաճ համարժեք այլընտրանք։

vi) **Փոխգործակցելիություն եւ շարունակական կատարելագործում.** արդարադատության մատչելիության արդյունարարությունը եւ արդյունավետությունը լիովին իրացնելու եւ խթանելու համար՝ տեխնոլոգիան պետք է փոխգործակցելի լինի արդարադատության համակարգի բոլոր հատվածների միջ եւ։ Այն պետք է նախագծված լինի եւ շահագործվի այնպես, որ հնարավոր լինի ապահովել շարունակական կատարելագործում։ Հետ եւաբար պետք է ներդրվեն մեխանիզմներ՝ օգտագործողի կողմից դրա կիրառման վերաբերյալ արդյունավետ հետադարձ տեղեկություններ տրամադրվելու համար։

vii) **Փորձնական կիրառումը.** տեխնոլոգիայի մշակման ազդեցությունը միշտ չէ, որ կարող է լիովին գնահատվել նախքան ներդրումը: Չնախատեսված հետ եւանքներից պաշտպանելու, ինչպես նա եւ տեխնոլոգիական նորարարության պատշաճ գնահատման հնարավորություն տալու համար նոր տեխնոլոգիայի կիրառումը պետք է ենթակա լինի փորձնական կիրառման մինչ եւ դրա լիովին ներդրումը:

viii) **Ոչ խտրական նախագծում եւ աշխատանք**. դատական իշխանությանն աջակցող եւ օժանդակող տեխնոլոգիան պետք է ակտիվորեն նախագծվի եւ շահագործվի այնպես, որ լինի ոչ խտրական: Այն պետք է համապատասխանի օգտագործողակենտրոն նախագծմանը եւ աշխատանքին: Պետք է հաշվի առնվեն բոլոր օգտագործողների, լինեն նրանք դատավորներ, իրավաբաններ, հանրության այլ անդամներ, կարիքները՝ ապահովելու համար, որ տեխնոլոգիայի նախագծումը եւ աշխատանքը դատական իշխանության կողմից արդար լինի: Հետեւաբար նախագծող թիմերը պետք է լինեն միջգիտակարգային:

ix) **Թափանցիկություն եւ ընկալելիություն.** տեխնոլոգիական դիզայնը պետք է լինի թափանցիկ եւ օգտագործողների համար ընկալելի: Դա մասնավորապես այդպես է, երբ կիրառվում է ԱԲ-ն, եւ երբ տեխնոլոգիան կիրառվում է գործերի կառավարման եւ դատական որոշումների կայացման հարցում օժանդակելու համար:

x) **Հաշվետվողականություն**. տեխնոլոգիայի բնույթը եւ կիրառությունը պետք է կարգավորվեն հաշվետվողականության պատշաճ մեխանիզմներով: Դրա նախագծումը եւ ներդրումը պետք է հնարավորություն տան ենթարկելու մանրամասն ուսումնասիրության, այդ թվում՝ օրենսդրական մանրամասն ուսումնասիրության եւ թույլտվության՝ պետության կողմից եւ քաղաքացիական հասարակության կողմից: Դրա կիրառումն առանձին վարույթներով պետք է ենթարկվի վարույթի կողմերի կողմից մանրամասն ուսումնասիրության՝ պատշաճ ծանուցման, մրցակցության եւ դատական հաշվետվողականության սկզբունքներին համապատասխան:

xi) **Ամբողջականություն, անվտանգություն եւ տվյալների պաշտպանություն.** տեխնոլոգիայի նկատմամբ պետք է կիրառվեն արդյունավետ կազմակերպական եւ տեխնիկական միջոցներ՝ տվյալների պաշտպանության մասին ցանկացած կիրառելի օրենքով պահանջվող կիրառելի չափանիշներին համապատասխան, դատական մարմինների կողմից օգտագործվող տվյալների ամբողջականությունն ու անվտանգությունը պահպանելու համար, որպեսզի պահպանվի դատական իշխանության նկատմամբ վստահությունը եւ դրա լեգիտիմությունը: Այդ միջոցները պետք է նախատեսեն այդ տվյալների մատչելիության հսկողության տարբերակված միջոցներ դատավորների, դատարանի վարչակազմի, կողմերի, օրինական ներկայացուցիչների եւ հանրության համար:

xii) **Բաց լինելը եւ գաղտնիությունը**. ամբողջականությունը, անվտանգությունը եւ տվյալների պաշտպանությունը պահպանելուն ուղղված միջոցները չպետք է խաթարեն դատական իշխանության՝ հրապարակայնության սկզբունքն ապահովելու կարողությունը, այդ թվում՝ դրանից ցանկացած հարգելի շեղում կամ դրա նկատմամբ սահմանափակում՝ պաշտպանելու համար գաղտնիության կամ այլ իրավունքներ կամ շահեր՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին համապատասխան:

xiii) **Ֆինանսավորում**. տեխնոլոգիան, դրա ներմուծումը, տեխնիկական սպասարկումը, դատարանի վարչակազմի եւ դատավորների կողմից կիրառումը եւ դրա թարմացումը պետք է պատշաճ ֆինանսավորվեն շահագործման ամբողջ ժամկետի ընթացքում: Ֆինանսավորումը պետք է աջակցի դրա արդյունավետ նախագծմանը եւ ներդրմանը: Այն նա եւ պետք է դատարանի վարչակազմի կողմից դրա արդյունավետ տեխնիկական սպասարկմանը եւ շարունակական կատարելագործմանը պատշաճ աջակցելու համար: Հետ եւաբար պետք է գործեն մեխանիզմներ՝ գործառնական տվյալների արդյունավետ հավաքագրում ապահովելու համար՝ դատական մարմինների եւ դատարանի կառավարման համար պատասխանատու անձանց կողմից տեխնոլոգիայի աշխատանքը եւ դատական իշխանության եւ դատարանից օգտվողների վրա դրա ազդեցությունը

գնահատելու նպատակով։

xiv) **Վերապատրաստում եւ շահագործման համար պիտանելիությունը**. ապահովելու համար, որ տեխնոլոգիան կարող է օգտագործվել հնարավորինս արդյունարար եւ արդյունավետ եղանակով, դատական իշխանությունը եւ դատարանի վարչակազմը պետք է պատշաճ տեղեկացված եւ վերապատրաստում անցած լինեն դատական իշխանության կողմից կիրառվող տեխնոլոգիայի բնույթի եւ արդյունավետ կիրառման վերաբերյալ։

Բառարան

Կարծիքում օգտագործվում են հետ եւյալ եզրույթները.

ա. **Արհեստական բանականություն (ԱԲ)**՝ մարդու ճանաչողական ունակությունների եւ որոշումների կայացման կրկնօրինակում մեքենայի կողմից։ Սույն կարծիքի շրջանակներում ԱԲ-ի նշված հիմնական ձ եւը մեքենայական ուսուցումն է։ Այն գործընթաց է, որն օգտագործում է վիճակագրական, մաթեմատիկական մոդելներ (ալգորիթմներ), որոնք համակարգիչներին հնարավորություն են տալիս հայտնաբերելու մաթեմատիկական օրինաչափությունները տվյալների (տեղեկությունների) մեծ խմբերում՝ առանց բացահայտ ցուցման։ «Ուսուցում» ասելով՝ հասկանում ենք հենց օրինաչափությունների հայտնաբերում։ Այս վերլուծությունն այնուհետ եւ ձ եւավորում է, օրինակ, տվյալների դասակարգման, տվյալների տեսակավորման կամ որոշումների կայացման հիմքը։

բ. **Ձայնային կոնֆերանս**՝ համակարգ, որն օգտագործում է տեխնոլոգիա, անկախ նրանից՝ հեռախոսային, թե թվային՝ համացանցի միջոցով, հանդիպմանը, ինչպես օրինակ՝ դատական լսմանը ձայնի միջոցով նպաստելու համար։

գ. **Գործերի կառավարման համակարգեր**՝ էլեկտրոնային համակարգեր, որոնք աջակցում են արդարադատության իրականացմանը։ Դրանք ներառում են ավտոմատացված մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս, որ

փաստաթղթերը եւ ապացույցները վերբեռնվեն եւ կողմերին եւ դատավորներին տրամադրվեն փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացման միջոցով, նպաստում են վարույթների ժամանակացույցի կազմմանը՝ օրերի նշանակման գործիքների միջոցով, խթանում են ընթացակարգերի պահպանումը, այդ թվում՝ համապատասխանության մշտադիտարկումը, խթանում են դատարանների ռեսուրսների, այդ թվում՝ դատավորների աշխատանքային ծանրաբեռնվածության արդյունավետ բաշխումը եւ կառավարումը։

դ. **Գործերի ընթացքի հետ եւելիության համակարգեր**՝ էլեկտրոնային համակարգ, որը դրա օգտագործողին հնարավորություն է տալիս տեղեկություններ ստանալ վարույթների վերաբերյալ։ Այդպիսի տեղեկությունները ներառում են յուրաքանչյուր գործի դատարանի նույնականացման համարը, վարույթի կողմերի անունները, վարույթի կողմերի օրինական ներկայացուցիչների տվյալները, վարույթով ներկայացված փաստաթղթերի եւ ցանկացած կայացված որոշման կամ վճռի մանրամասները եւ նշանակված լսումների եւ գործի ընթացքի մանրամասները։

ե. **Տվյալների գործիքներ**՝ էլեկտրոնային միջոցներ՝ տեղեկությունները մշակելու եւ կառավարելու եւ օրենսդրությանը եւ դատական որոշումներին (նախադեպային իրավունք) մատչելիություն ապահովելու համար։ Դրանք կարող են տրամադրվել պետության կողմից կամ մասնավոր հատվածի կողմից։

զ. **Էլեկտրոնային բացահայտում կամ էլեկտրոնային հայտնաբերում՝** էլեկտրոնային փաստաթղթերի (էլ. փաստաթղթեր) բացահայտումը դատական վարույթի ընթացքում։

է. **Փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացում եւ ընթացակարգեր**՝ առցանց գործիք, որը կողմերին եւ փաստաբաններին հնարավորություն է տալիս դատարան վերբեռնել եւ փոխանակել գործով փաստաթղթերի եւ ապացույցների թվային տարբերակները։

ը. **Փորձագիտական համակարգեր**՝ ԱԲ-ի ձ եւ։ Առցանց գործիք՝ կազմված երկու մասից՝ գիտելիքների շտեմարան, որը կազմված է կանոններից եւ հայտնի

փաստերից, եւ տրամաբանական ենթադրությունների մեխանիզմ։ Տրամաբանական ենթադրությունների մեխանիզմը կանոնները դեդուկտիվ հիմնավորման միջոցով կիրառում է հայտնի փաստերի նկատմամբ՝ նոր փաստերի հանգելու համար։ Այն նախատեսված է կրկնօրինակելու մարդկային փորձագետի կողմից որոշումների կայացումը։

թ. **Հիբրիդային լսում՝** լսում, որում մասնակցիներից (դատավոր, կողմերի, վկաներ) մեկը կամ մի քանիսը մասնակցում են՝ գտնվելով դատարանի ֆիզիկական շենքում։ Մյուս մասնակիցները մասնակցում են ձայնային կամ տեսակոնֆերանսի կամ երկուսի միջոցով։

ժ. **Դատական աջակցության համակարգ՝** գործերի կառավարման համակարգի ընդլայնում, որը դատավորներին տրամադրում է տարբեր միջոցներ՝ վարույթի արդյունավետ եւ գործնական կառավարումը խթանելու համար, օրինակ՝ փաստաթղթերի, վճիռների կամ որոշումների լրացման հարցում աջակցելու կամ գալիք ընթացակարգային ժամկետների վերաբերյալ դատավորների իրազեկվածությունը խթանելու միջոցով։ Դա ներառում է նա եւ, օրինակ, փաստաթղթերի ավտոմատացումը «որոշումների ծառերի» կիրառման միջոցով։

ժա. **Մեքենաընթեռնելի՝** տեղեկությունների կառուցվածք, ինչպես օրինակ՝ փաստաթղթում կամ մասնավորապես վճռում առկա կառուցվածքը, որը հնարավոր է մշակել համակարգչային ծրագրով։ Այն միջոցը, որով փաստաթղթերը կարող են մշակվել մեքենայական ուսուցման միջոցով։

ժբ. **Կանխատեսող ծածկագրում՝** կանխատեսող տեխնոլոգիայի ձ եւ, որը դյուրացնում է փաստաթղթերի եւ էլեկտրոնային փաստաթղթերի ուսումնասիրությունը՝ որպես բացահայտման կամ էլեկտրոնային բացահայտման գործընթացի մաս դատական վարույթի ընթացքում։ Տեխնոլոգիային ուսուցանվել է վերահսկվող եւ ընդլայնված մեքենայական ուսուցման կիրառման միջոցով ճանաչել բացահայտման ենթակա փաստաթղթերը։

ժգ. **Հեռավար լսում՝** լսում, որն անցկացվում է ձայնային կամ տեսակոնֆերանսի միջոցում, որում մասնակիցներից ոչ ոք լսման ընթացքում

ներկա չէ դատարանի ֆիզիկական շենքում։

ժդ. **Աջակցող (կամ օժանդակող) ԱԲ՝** ԱԲ-ի կիրառումը՝ գործերի կառավարմանը եւ դատական որոշումների կայացմանն աջակցելու համար։

ժե. **Տեսակոնֆերանս՝** համակարգ, որն օգտագործում է տեխնոլոգիա, որը նախատեսում է անհատների ձայնի եւ տեսապատկերների միաժամանակյա հեռարձակում՝ համաժամանակյա հաղորդակցության համար։